

Սեյրան Ա. Զաքարյան
Փիլիսոփ. գիյր. դոկտոր

ՎԱՀՐԱՄ ԲԱՔՈՒՆՈՒ ՊԱՏՄԱՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ*

Բանալի բառեր – Վահրամ Բաբունի, միջնադարյան պատմագրություն, պատմափիլիսոփայություն, Հայոց պատմություն, պատմական հիշողություն, եկեղեցի, աստվածապաշտություն, պետության օրինականություն, ժառանգական իրավունք:

Միջնադարն ուներ հոգևոր մշակույթի համակարգում պատմության տեղի ու դերի ըմբռնման, «պատմության կերպարի» ստեղծման, պատմական գործիչների ու իրադարձությունների վերլուծության ու իմաստավորման, ազգային ինքնության համապատկերում պատմական հիշողության, պատմական անցյալի և ազգային արժեքների կարևորման իր յուրահատկությունները, որոնք դրսևորվել են նաև XIII դարի հայ պատմագրության մեջ, ի մասնավորի՝ Վահրամ Բաբունու երկերում:

Վահրամ Բաբունին Կիլիկիայի հայկական պետության թագավոր Լևոն Գ-ի (1270 –1289) ատենադպիրն էր, պետության կանցլերը, փիլիսոփա-աստվածաբան, բանաստեղծ-պատմաբան, քաղաքական-պետական գործիչ, որի համար պատմությունը սուկ անցյալում տեղի ունեցած դեպքերի վերհիշում չէր, այլ անցյալն ու ներկան կամրջելու, ներկայի իրողությունները հասկանալու, իմաստավորելու և թագավորի իշխանությունն ու թագավորական կարգերը օրինականացնելու միջոցը: Այս իմաստով նա պատմությանը նայում էր ոչ միայն և ոչ այնքան պատմագրի, դպիրի կամ աստվածաբան-իմաստասերի, որքան պետական շահը գերադաս համարող պետական-քաղաքական գործչի տեսանկյունից: Անցյալի ու ներկայի իրադարձությունները վերլուծելիս Բաբունուն առաջին հերթին հետաքրքրում էին պետության ծագմանն ու կառուցվածքին, կառավարմանն ու իշխանության գործադրման ձևերին և սոցիալական համերաշխության ապահովման մեխանիզմներին, պետականության պահպանման նախադրյալներին, թագավորական իշխանության օրինականության հիմքերին, իշխանավորների բարոյական կեցվածքին և թագավորական իշխանության կենսունակու-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.10. 2016:

թյան պահպանմանն առնչվող տարատեսակ խնդիրները: Քաղաքագիտական ու պատմափիլիսոփայական բնույթի հարցերը նա հիմնականում քննարկել է միջնադարյան հայ իրականության համար բացառիկ մի երևույթի՝ 1271 թ. Լևոն Գ-ին թագավոր օժելու արարողության ժամանակ կարդացած ճառում¹: Իսկ նրա պատմագիտական հայացքների մասին պատկերացում կարող ենք կազմել «Ռոտանաուր Պատմություն Ռուբենեանց» չափածո պատմավիպասանական երկից²: Հարկ է նշել, որ այս երկու երկերի միջև գոյություն ունեն գաղափարական-բովանդակային ընդհանրություններ և տարբերություններ: «Ճառ»-ում տեսական հարցադրումներն ու պատմական նյութի արծարծումները համեմված են բարոյախրատական-ներբողական մտքերով ու պիտոյական պահանջներով, իսկ չափածո պատմության մեջ գերակշռում է պատմական իրադարձությունների և նշանավոր գործիչների նկատմամբ զգացունքային-վիպական վերաբերմունքը: Երկու դեպքում էլ նրա համար պատմական նյութի և քաղաքագիտական ու պատմափիլիսոփայական գաղափարների արծարծումը տեսական-մեթոդաբանական հիմք է դառնում ինչպես պատմական անցյալի նկարագրության ու ընդհանրացման, այնպես էլ իր ժամանակի իրադարձությունների իմաստավորման ու գնահատման համար:

Բաբունին բազմաշնորհ և բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն էր: Նրա պատմագիտական ու պատմափիլիսոփայական հայացքների ձևավորման վրա Ս. Գրքից զատ ազդեցություն են ունեցել ինչպես հայ (Մովսես Խորենացի, Ներսես Շնորհալի և այլք), այնպես էլ բյուզանդական (հունալեզու) ու արևմտաեվրոպական (լատինալեզու) տարբեր հեղինակների աստվածաբանական-փիլիսոփայական և պատմագիտական ուսմունքները (օրինակ՝ փաստ է, որ Բաբունին ծանոթ էր Օգոստինոս Երանելու երկերին: Հայ իրականության մեջ նա առաջիններից մեկն է, եթե ոչ առաջինը, ով մեջբերումներ է արել Օգոստինոսից և օգտվել նրա պատմափիլիսոփայական ուսմունքի որոշ դրույթներից): Նա իր պատմավիպասանական երկը շարադրել է չափածո՝ հետևելով Ներսես Շնորհալուն, և Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունն սկսելով Գագիկ Բ-ի ժամանակներից ու հասցնելով մինչև Լևոն Գ-ի թագավորության շրջան: Բաբունու պատմագիտական ու պատմափիլիսոփայական հայացքները հասկանալու և մեկնաբանելու համար էական նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե նա ինչ վերաբերմունք ուներ առհասարակ եկեղեցու և ի մասնավորի՝ միաբարական (եկեղեցիների միության կամ միավորման) շարժման նկատմամբ: Որոշ տեղեկությունների համա-

1 Տե՛ս «Ի մեծի աուր յայտնութեան Քրիստոսի, վերլուծութիւն բանին Եսայեայ, յետ որոյ և հաւաքմունք աստուածաշունչ բանից թարգման յօրինեալ ի խորհուրդ թագաւորաց որ յերկրի, արագ ցուցմամբ և իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աուր օժեալ ձեռնադրեցաւ թագաւորն Հայոց Մեծն Լևոն, «Աբարատ», 1868, է, ԺԲ, 1869, Ա-Ե (այսուհետ՝ **Վահրամ Բաբունի**, Ի մեծի աուր յայտնութեան Քրիստոսի...): Այս երկի երուսաղեմյան հրատարակության վերնագիրն է՝ «Վահրամայ վարդապետի ատենադպրի Լևոն արքայի Բան յայտնութիւն Տեառն և յօծումն Լևոնի արքայի», «Նշխարք նախնեաց», Ա, Երուսաղէմ, 1875:

2 Տե՛ս Վահրամայ Բաբունույ Ռոտանաուր Պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ **Կ. Շահնազարեանց**, Փարիզ, 1859, էջ 182-248: Սա ոչ միայն պատմական, այլև գեղարվեստական գործ է: Այդ մասին տե՛ս **Մադոյան Ա.Գ.**, Միջնադարյան հայկական պոեմը, Եր., 1985, էջ 236-248:

ձայն Բաբունին եղել է «քաղքեղոնական» և հարել է միարարական շարժմանը: Այդ մասին Գևորգ Սկևռացու վարքագիրը գրում է, որ Բաբունին «էր բանիբուն և ճարտասան աներկեղ, միանգամայն անամալթ և քաջաբան, զի ունէր զաղանդ քաղքեղոնական, բայց երկնչէր խաւսել յայտ յանդիման, զի թագաւորն իշխանաւքն և այլ գիտնականաւքն ուղղափառք էին»³: Սակայն, ինչպէս իրավացիորեն նկատել է բաբունիագետ Գ. Գրիգորյանը, այդ հարցի վերաբերյալ բավարար տեղեկություններ չունենք, որպէսզի որոշակի պատկերացում կազմենք նրա քաղաքական գործունեության, դավանաբանական կողմնորոշման շարժառիթների ու նպատակների, նկատառումների ու ակնկալիքների մասին⁴: Նրա տեսական ժառանգության մեջ նույնպէս բացահայտորեն տեսանելի չեն միարարական կամ հակամիարարական գաղափարախոսության հետքերը: Այս հարցի վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը հող է ստեղծում տարբեր ենթադրությունների համար: Վերջերս, հենվելով Բաբունու «Յաղագս Սրբոյ Երրորդութեանն և մի Աստուածութեանն և փրկական տնօրէնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ» աստվածաբանական բնույթի աշխատության քննության վրա, դրա աշխարհաբար հրատարակության խմբագիր ու առաջաբանի հեղինակ Զաքարիա վարդապետ Բաղումյանը Բաբունուն անվանում է ոչ պակաս և ոչ ավելի՝ «Հայոց եկեղեցու ուղղափառ դավանանքի կորովի պաշտպան»⁵, թեև հրատարակված տեքստը, ըստ իս, այդպիսի եզրահանգման հիմք չի տալիս: **Նախ**՝ տեքստում Բաբունին չի հիշատակում ո՛չ Հայոց եկեղեցու անունը, ո՛չ էլ նրա դավանաբանությունը, **երկրորդ**՝ սուրբ Երրորդության խորհուրդը ընդունում են ինչպէս հայոց, այնպէս էլ ուղղափառ հունական, կաթոլիկ և այլ եկեղեցիները, հետևաբար չի կարելի պնդել, թե նա այդ երկուսն էլ բացառապէս հիմնավորում է հայոց եկեղեցու դավանաբանության խորհուրդը, **երրորդ**՝ ինչպէս այս, այնպէս էլ աստվածաբանական-իմաստասիրական բնույթի այլ երկերում Բաբունին անդրադառնում է ոչ թե որևէ (հայ, հույն, լատին) եկեղեցու դավանաբանությանը, այլ առհասարակ քրիստոնեական հավատքին առնչվող հարցերի:

Անշուշտ, ոչ մի հիմք չունենք կասկածելու Գևորգ Սկևռացու վարքագրի տեղեկությանը, հատկապէս եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ վարքագիրը մեղադրանքին զուգահեռ չի զլանում գովաբանական խոսքեր շոայլել Բաբունու հասցեին: Հավանաբար Բաբունի քաղաքական-պետական գործիչը ունեցել է արևմտամետ (կաթոլիկամետ) կողմնորոշում, բայց խուսափել է բացահայտ ու պաշտոնապէս արտահայտել իր տեսակետը: Սակայն հազիվ թե նա գործնականում լիներ քաղկեղոնական, այսինքն՝ ուղղափառ հունական կամ կաթողիկե հռոմեական եկեղեցու հետևորդ: Քանի որ ուղղակի փաստեր չկան այն մասին, թե որ եկեղեցու հետևորդ էր Բաբունին, ուստի մնում է ենթադրություններ անել՝ հենվելով կողմնակի փաստերի, ի մասնավորի նրա գրվածքների ենթատեքստերի, առանձին դեմքերի, դէպքերի ու կառույցների նկատմամբ նրա վերաբերմունքի վրա:

3 **Բաղդասարյան Է.** Գևորգ Սկևռացու վարքը, «Բանբեր Մատենադարանի», N 7, 1964, էջ 421:

4 Տե՛ս **Գրիգորյան Գ. Հ.**, Վահրամ Բաբունու փիլիսոփայությունը, Եր., 1969, էջ 16:

5 **Վահրամ Բաբունի.** Հավատքի դավանություն, Ս. Էջմիածին, 2014, էջ 8:

Լինելով ատենադպիր՝ նա թերևս ստիպված էր ձևականորեն մասնակցելու եկեղեցական արարողություններին, սակայն իր գրվածքներում Բաբունին առանձնապես ջերմ վերաբերմունք չուներ Հայոց եկեղեցու և առհասարակ եկեղեցականների նկատմամբ: Օրինակ՝ «ուղղափառ դավանանք» ունեցող Լևոն Գ-ի թագադրման արարողության ժամանակ կարդացած «Ճառ»-ում, երբ արքունիքում հավաքված էին բազմաթիվ բարձրաստիճան հյուրեր, իշխաններ, հոգևորականներ, Բաբունին չի արտաբերել «Հայոց կամ Հայաստանեայց եկեղեցի» արտահայտությունը, այլ ընդամենը՝ «եկեղեցի», «սուրբ եկեղեցի» և «Աստծո եկեղեցի» չեզոք հասկացությունները: Իր պատմավիպասանական երկում փառաբանելով Թորոս իշխանին, նա գրում է. «Բոլոր սրտի զԱստուած սիրեալ, // Եւ զպաշտօնեայս նորա պատուեալ, // Եկեղեցիս բազում շինեալ, // Եւ վանորայս յոյժ հոչակեալ»⁶: Իսկ թվարկելով Լևոն Մեծագործի՝ թագավոր օծվելուց հետո արված կարևոր գործերը՝ նա գրում է, որ «Տան Թորգոմայ թագաւորեալ, // Յարքայական այթոռ նըստեալ, // Ջեկեղեցի բարձրացուցեալ, // Եւ աշխարհի շինող եղեալ, // Ջանկեալ Հայոց ազգս կանգեալ, // Եւ տէրութիւն ըն նորոգեալ»⁷: Այսինքն՝ նա հաճախակի գործածում է «ազգս Հայոց», բայց ոչ՝ «Հայոց եկեղեցի» արտահայտությունները: Իր պատմավիպասանական երկում, որը, ի դեպ, գրել է Լևոն Գ-ի խորհրդով, նա խուսափում է Հայոց եկեղեցու, դրա նշանավոր դեմքերի անունները հիշատակելուց (մի առիթով պարզապես թվարկում է Ներսես Շնորհալուց հետո եղած կաթողիկոսների անունները): Նա չի ասում «Հայոց եկեղեցու հայրապետ», այլ «մեր հայրապետ», որին «Ճառ»-ում մաղթում է «պարկեշտ պաշտմամբ սպասաւորել Աստուածային խորհրդոյս յեկեղեցի սուրբ ի յերկրի»⁸: Առհասարակ նա այնքան էլ չի կարևորում եկեղեցու խաղացած դերը Հայոց պատմության մեջ: Դրանով պետք է բացատրել այն, որ ի տարբերություն XIII դարի հայ այլ պատմագիրների (օրինակ, Ստեփանոս Օրբելյանի), Բաբունին շարադրում է ոչ թե եկեղեցու կամ եկեղեցու և որևէ իշխանատոհմի, այլ բացառապես Կիլիկիայի հայկական իշխանապետության և թագավորության պատմությունը:

Այդ նույն կողմնակի փաստերի հիման վրա կարող ենք նաև ասել, որ Բաբունին առանձնապես ջերմ չէր նաև ուղղափառ կամ կաթոլիկ եկեղեցու նկատմամբ: Դրա պատճառն այն էր, որ նրան գերազանցապես մտահոգում էր Կիլիկիայի հայոց թագավորության ճակատագիրը: Այդ ժամանակվա շատ մտածողների նման թերևս նա էլ կարծում էր, որ Կիլիկիայի հայկական պետությունը միայնակ ի գործու չէ դիմագրավելու արտաքին վտանգներին՝ հարևան մուսուլման երկրների հարձակումներին, ուստի անհրաժեշտ է դաշինք կնքել Արևմուտքի, Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ՝ թեկուզև ծիսադավանաբանական գիշումների կամ եկեղեցիների միության (և ոչ թե միաձուլման) գնով: Եկեղեցիների նկատմամբ զուսպ, չափավոր ու չեզոք դիրքորոշումից և «դավանաբանական անտարբերությունից» ու «Աստծո եկեղեցու» փառաբանությունից կարող ենք հետևություն անել, որ նա քաղաքական այն գործիչներից էր, ով Կիլիկիայի հայկական

6 «Վահրամայ Բաբունոյ Ոստանաւոր Պատմութիւն Ռուբենեանց», էջ 195:

7 Նույն տեղում, էջ 215:

8 Վահրամ Բաբունի, Ի մեծի աւուր յայտնութեան Քրիստոսի..., 1869, Եր., էջ 101:

թագավորության պահպանության նպատակով կողմնակից էր բազմազգ ու բազմադավան երկրում համաքրիստոնեական ճակատի ստեղծմանը՝ այդ թվում նաև քույր եկեղեցիների միության կամ միավորման ճանապարհով: Եկեղեցիների միության հարցում նա փաստորեն հետևում էր Ներսես Շնորհալու և Ներսես Լամբրոնացու՝ բանակցությունների միջոցով վիճահարույց հարցերի քննարկման ու միջեկեղեցական հարաբերությունների կարգավորման փոխզիջումային դիրքորոշմանը: Համենայն դեպս, ի տարբերություն շատ միարարականների, ովքեր, իրենց դավանափոխությունը կամ արևմտամետ դիրքորոշումը արդարացնելու համար բազում մեղադրանքներ էին հնչեցնում հայ ազգի ու հայոց եկեղեցու հասցեին, Բաբունին նախ՝ ոչ միայն չի մեղադրում ու պարսավում, ոչ միայն չի հեղինակագրկում ազգային-ավանդականը, այլև, ընդհակառակը, հպարտանում է իր ազգի պատմությամբ, նրա թագավորների քաղաքական-դիվանագիտական հաջողություններով ու ռազմական հաղթանակներով: Նա ավելի շուտ մտածում է ստեղծված անբարենպաստ ռազմաքաղաքական պայմաններում քրիստոնյա ազգերի միավորման, համաքրիստոնեական դաշինքի ու ձևակառուցման մասին: Եթե այս ենթադրությունները ճիշտ են, ապա նա կարող է համարվել համաքրիստոնեական ուժերի միավորման (Կիլիկիայի հայկական պետությունում և դրան հարակից տարածքներում գործող քրիստոնեական եկեղեցիների միության⁹) գաղափարախոս:

Որ Բաբունու դիրքորոշումը փոխզիջումային էր, երևում է նաև այն բանից, որ դիվանագետ մտածողը իր գրվածքներում բացահայտորեն հանդես չի գալիս ո՛չ Հայոց եկեղեցու դավանաբանության պաշտպանությամբ, ո՛չ էլ ուղղափառ հունական կամ կաթոլիկ եկեղեցու փառաբանությամբ: Ավելին, տեսական-փիլիսոփայական տարբեր հարցերի քննարկման ժամանակ նա մի կողմից հետևում է հայ փիլիսոփայության մեջ ձևավորված ավանդույթներին, ի մասնավորի գրում է Դավիթ Անհաղթի երկերի մեկնություններ, իսկ մյուս կողմից շրջանառում է լատին մտածողների երկերից քաղած մտքեր: Կարելի է ասել, որ նա հանուն հայոց պետության պաշտպանում է հայրենական ավանդույթները, քրիստոնեական եկեղեցու (Աստծո եկեղեցու) ու հավատքի սկզբունքները, մտածում քրիստոնյա ազգերի, Քրիստոսի հավատացյալների միասնության ու համագործակցության մասին¹⁰: Բաբունու համար գերակա էր ոչ թե եկեղեցու, այլ պետության շահը:

9 Այդ մասին տես «Հայոց պատմություն», հատ. 2, Գիրք II, Միջին դարեր (IX դարի կես - XVII դարի առաջին կես) Եր., 2014, էջ 374-376:

10 Համանման տեսակետ ունեւր նաև Բաբունու ժամանակակից Հովհաննես Պլուզ Երզնկացին, ով 1270-ական թվականներին գտնվում էր Կիլիկիայի հայկական արքունիքում և չէր կարող շփումներ չունենալ ու մտքեր չփոխանակել Լեոն Գ-ի ատենադարի հետ: Համենայն դեպս նրանց փիլիսոփայական ու քաղաքագիտական հայացքների միջև կան ընդհանրություններ: 1283 թ. Երզնկացի կրկին Կիլիկիայում էր, որտեղ կարդում է իր քաղաքագիտական բնույթի «Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութիւն կացցէ» նշանավոր ձառը: Ի տարբերություն Բաբունու, Երզնկացի հայոց եկեղեցու դավանաբանության եռանդուն պաշտպան էր, սակայն միաժամանակ՝ համաքրիստոնեական միության գաղափարի ջատագով: Ելնելով այն մտքից, որ «ամենայն մարդիկ եղբարք են ըստ արարչութեանն: Եւ առաւել քրիստոնէքն եղբայր են, զի միոյ աւագանի ծնունդ են և երկնաւոր հարն որդի» (**Քաղղասարյան Է. Մ.**, Հովհաննես Երզնկացի և նրա խրատական արձակը, Քննադրեր, Եր., 1977, էջ 167) Երզնկացի իր խրատներում ու քարոզներում հորդորում է քրիստոնյաներին «լինիցիք միմեանց որպէս զպարիսպ ամուր» (տույն տեղում, էջ 227), որովհետև «որպէս բազմութիւն գաւրաց քաջամարտիկ զինուարաց միաբանելոց դիւրաւ յաղթեն թշնամեացն,

Այս մտայնությունը «ընթերցվում» է նրա պատմագրական ու քաղաքագիտական երկերի տողատակերում ու ենթատեքստերում: Այս իմաստով Բաբունին «հեղաշրջում» է անում պատմական հիշողության և ազգային ինքնության կառուցվածքում՝ պատմությունը ծառայեցնելով ոչ թե եկեղեցու, այլ պետության՝ Ռուբինյան իշխանապետության և Հեթումյան հարստության օրինականության ու սոցիալական հեղինակության հիմնավորման համար: Իհարկե, դա չի նշանակում, թե նա աշխարհիկ պետության հարատևումը համարում էր մարդկային կեցության գերնպատակը. պետությունը կոչված է բավարարելու մարդկանց երկրային պահանջմունքները, հոգևոր դաստիարակության միջոցով մարդկանց նախապատրաստելու երկնային թագավորության գալստյանը: Սակայն այս վերերկրային նպատակին հասնելու համար հարկավոր է լուծել երկրային խնդիրներ: Բնականաբար, Բաբունու հայացքներին այս կամ այն չափով ներհատուկ էին միջնադարյան պատմագրական ու պատմափիլիսոփայական մտքի բնորոշ գծերը՝ կրոնական գաղափարախոսության ու սուրբգրային ավանդույթի գերիշխանությունը, պատմագրության կախվածությունը աստվածաբանությունից, ազգերի պատմության մեկնաբանությունը որպես աստվածային նախախնանության ու աստվածային կամքի իրականացում, պատմական աշխարհայացքի դուալիզմը: Նա մարդկության պատմությունը դիտում է որպես բարու և չարի, Աստծո և սատանայի, երկնային ու երկրային թագավորությունների պայքարի պատմություն: Նրա հայացքներին բնորոշ են նաև պատմական ժամանակի գծային ըմբռնումը, եղելությունների ներկայացումը ժամանակագրական կարգով, վախճանաբանությունը, յուրատեսակ «ազգասիրությունը» (ազգի, իշխանատոհմի, եկեղեցու պատմության ներկայացումը որպես սրբազան պատմության մաս), աղբյուրների նկատմամբ անքննադատ կամ կամայական, աչառու վերաբերմունքը, պատմական ու քաղաքական դեպքերի բացատրության ռացիոնալ (պատճառահետևանքային կապերի) և իռացիոնալ (առասպելների, մարգարեությունների, հրաշքների, տեսիլքների, կանխագուշակությունների) միախառնումը և այլն:

Միջնադարյան մտածողների ու պատմիչների նման Բաբունին ընդունում է մարդկության առաջացման և ազգերի ծագումնաբանության աստվածաշնչյան առասպելը, նախախնամությամբ բացատրում պատմության ընթացքը, երկրային թագավորությունների առաջացումն ու կործանումը, ուշադրություն դարձնում հիմնականում աստվածապաշտ ազգերի (հրեաների ու քրիստոնյաների) պատմությանը, ընդունում պատմական ժամանակի միագիծ ընթացքը մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը, «ազգասի-

այնպես եղբարցն բազմութիւն քաջ հաւատով և հաւասար սիրով՝ դիրքաւ յաղթեն սատանայի, և մեղաւեր դիւացն, և չար մարդկան, որք շարժին ի սատանայէ» (նույն տեղում, էջ 223): Ինչպես նկատում է Է. Բաղդասարյանը, Երզնկացին, լինելով հայ առաքելական եկեղեցու դավանանքի ջերմ պաշտպան, հանդուրժողականություն է ցուցաբերել քրիստոնեական քոյր եկեղեցիների հանդեպ, կոչ է արել «վերջ տալու եկեղեցիների հակառակությանը, որն առավելապես վերաբերում էր ծիսական արարողություններին, գտնելով, որ այդ ամենը հետևանք է տարբեր երկրներում քրիստոնեության ընդունման ժամանակի և պատմական, անգամ եղանակային հանգամանքների և որևէ չափով չի կարող առնչվել բուն հավատին առ Աստված: Բացահայտ կոչ անելով համախմբվելու և անհաշտ պայքար մղելու եկեղեցու հակառակորդների դեմ՝ միաժամանակ շեշտում է, որ դա չպետք է կատարվի այլադավան քրիստոնյաների նկատմամբ» (**Յովհաննէս Երզնկացի**, Սատենագրություն, հատ. Ա, Ճատեր և քարոզներ: Բնագրերը հրատ. պատրաստեցին **Ա. Երզնկացի-Տէր-Սրայայանը** և **Է. Բաղդասարյանը**, Ներածականները **Է. Բաղդասարյանի**, Եր., 2013, էջ 27):

րության» դիրքերից շարադրում ու գնահատում պատմական իրադարձությունները, Կիլիկիայի հայկական թագավորության օրինականության հիմնավորման համար օգտագործում թե՛ առասպելական, թե՛ վիպական-գեղարվեստական նյութեր և թե՛ պատմական փաստեր: Բաբունու հայացքներում գերիշխում են պատմական անցյալի «քաղաքականացված» ու «բարոյականացված-իդեալականացված» մեկնաբանությունները: Միջնադարում ս. Գրքի պատմական մեկնաբանությունը («պատմական աստվածաբանությունը»¹¹) թեև իր նշանակությամբ զիջում էր այլաբանական, բարոյական ու խորհրդապաշտական (միստիկական) մեկնաբանություններին, այնուհանդերձ, նշանակալից տեղ էր զբաղեցնում գիտելիքի համակարգում: Պատմական մեկնաբանության տեսանկյունից հինկտակարանային կերպարները նախատիպեր էին ներկայի համար, իսկ ներկան իմաստավորվում էր աստվածաշնչյան պատմության կաղապարներով ու օրինակներով: Անցյալի ու ներկայի միջև սահմանները վերանում էին, որովհետև երկու դեպքում էլ նման պատճառներով ու մեթոդներով էին մեկնաբանվում իրադարձությունների իմաստն ու մարդկանց գործողությունները: Բաբունին՝ հետևելով «պատմական աստվածաբանության» սկզբունքներին, պատմական փաստերը տեղավորում է աստվածաշնչյան պատկերացումների շրջանակներում, իսկ ներկա իրականությունը «հարմարեցնում» կրոնա-աստվածաբանական մտածողության պահանջներին, այսինքն՝ փորձում համադրել հինն ու նորը, անցյալն ու ներկան, անշուշտ, հաշվի առնելով իր ժամանակի քաղաքական-գաղափարական կյանքի հրամայականները: Օրինակ, նա Լևոն Գ-ին մաղթում է աստվածաշնչյան Դավթի, Եզեկիայի, Հռոմի կայսր Կոստանդինոսի, հայոց արքա Տրդատի բարեպաշտությունը, Սողոմոնի, Դանիելի, Հովսեփի իմաստությունը, Աբրահամի և Հոբի ողորմածությունը, Իսահակի և Իսրայելի խոնարհությունը, Մովսեսի ու Դավթի հեգությունը, Սամսոնի և Տրդատի քաջությունը և «զամենայն բարեձևութիւնս ըստ նմանութեան բարեզարդ թագաւորացն որ ի հնումն և ի նորումս»¹²:

Ինչպես վերը նշեցինք, միջնադարյան մարդուն և պատմագրությանը խորթ չէին ազգասիրության ու հայրենասիրության դրսևորումները: Միջնադարյան պատմագրի «ազգասիրության» յուրահատկությունն այն էր, նկատում է Ռ. Քոլինգվուդը, որ պատմիչը՝ վարակված ազգային հակակրանքով կամ ազգային գերազանցությամբ, գիտեր, որ սխալ է վարվում: Նրա խնդիրը ոչ թե որևէ երկրի, օրինակ, Անգլիայի կամ Ֆրանսիայի փառաբանումն էր, այլ Աստծո գործերի մասին պատմելը¹³: Քրիստոնեությունը մերժում է ազգային խտրականության ցանկացած դրսևորում, ընդունում բոլոր մարդկանց հավասարության, պատմության ընդհանրականության, մարդկային կեցության նպատակի միասնության գաղափարը և մարդկանց խմբերին, ազգերին ու ցեղերին դիտում որպես երկրի վրա աստվածային կամքի կատարողներ: Անշուշտ, այս «աստվածաբանական հակաազգայնականությունը» բնավ էլ չի խանգարել, որ պատմության իմաստավորման ու մեկնաբանության ընթացքում միջնադարյան պատմիչները անդրադառնան

11 Репина Л. П., Зверева В. В., Парамонова М. Ю., История исторического знания, М., 2004, с. 86.

12 Վահրամ Բարունի, Ի մեծի ակոր յայտնութեան Քրիստոսի..., 1869, Եր., էջ 101:

13 Տե՛ս Կոլինգվուդ Ր. Ժ. Իդեա իստորի. Մ., 1980, էջ 52:

թագավորությունը, նրբ և ինչո՞ւ է առաջացել, ինչպիսի՞ն պետք է լինեն պետության կառուցվածքն ու թագավորական կարգերը, որո՞նք են թագավորության հաստատունության, կայունության ու հզորության նախադրյալները, որո՞նք են թագավորի, իշխանների, հոգևորականների գործառույթները և այլն: Բարունու կարծիքով՝ թագավորության (պետականության) կանոնավոր ու արդյունավետ գործառման և հարատևման համար անհրաժեշտ են երեք պայման-նախադրյալ՝ ա) հավատք (աստվածապաշտություն) և ճշմարիտ գործք, բ) թագավորական հարստության օրինականություն, որը խարսխված է ժառանգական իրավունքի վրա («սեպհական և հայրենեալք իրաւացի ի նախնեաց ունել զթագաւորութիւն»¹⁶) և գ) իմաստություն ու խոհեմություն (պետության իմաստուն կառավարում, իշխանության խելամիտ գործադրում): Հենց այս տեսանկյունից է նա շարադրում ու գնահատում հայոց (Կիլիկիայի հայկական պետության) պատմությունն ու պատմական գործիչների (թագավորների) գործունեությունը: Բարունին առանձին ազգի և առանձին թագավորության (տվյալ դեպքում հայոց ազգի և Ռուբինյան իշխանապետության ու Հեթումյան հարստության) ծագումնաբանությունն ու ինքնության պատմությունը դիտարկում է համաշխարհային պատմության համապատկերում՝ հիմք ընդունելով մարդկության ծագման, ազգերի ու թագավորությունների առաջացման սուրբգրային առասպելը: Այս հարցում նա հենվում է մարդկության պատմական շարժընթացի փուլերի վերաբերյալ ինչպես աստվածաշնչյան պատկերացումների և Օգոստինոս Երանելու ըմբռնումների, այնպես էլ հայոց ծագումնաբանության, հայոց պատմության հնագույն շրջանի մասին Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունների վրա:

Իր գաղափարական-քաղաքական կողմնորոշման ոգուն համապատասխան՝ նա Կիլիկիայի հայկական թագավորությունը դիտում է որպես հայկական թագավորական հարստությունների (Լևոն Գ-ին ընծայվում է «ի թագաւորութիւն՝ տանս Թորգոմայ ազգիս Հայաստանեայց»¹⁷), և ի մասնավորի Բագրատունյաց, անմիջական գահաժառանգորդն ու իրավահաջորդը: Նա Լևոն Գ-ին համարում է Ռուբենյան իշխանապետության ու Հեթումյան հարստության ժառանգորդը, Գագիկ թագավորների շառավիղը, Բագրատունյաց ազգից և աստվածաշնչյան Դավիթ թագավորի ու մարգարեի ցեղից սերվածը («Իսկ ըստ ծննդեան է սա որդի Զապելի՝ դստեր Լևոն արքայի, որդւոյ Ստեփանէի, որդւոյ Լևոնի, որդւոյ Կոնստանդեայ, որդւոյ Ռուբէնի, ի շառաւիղէ Գագկայ, յազգէ Բագրատունոյ, ի ցեղէ մեծին Դաւթայ թագաւորի և մարգարեի»¹⁸):

Միջնադարյան պատմագրության մեջ ազգի, արքայատոհմի և իշխա-

16 **Վահրամ Բարունի**, Ի մեծի աւոր յայտնութեան Քրիստոսի..., 1869, Ե, էջ 99:

17 **Վահրամ Բարունի**, Ի մեծի աւոր յայտնութեան Քրիստոսի..., 1869, Ա, էջ 9:

18 **Վահրամ Բարունի**, Ի մեծի աւոր յայտնութեան Քրիստոսի..., 1869, Ե, էջ 100: Սա միջնադարյան մտածելակերպին բնորոշ հնարք էր. ազգի, ցեղի, իշխանատոհմի, արքայատոհմի հեղինակությունն ու օրինականությունը կախված էր դրանց հնության, մարդկության հայտնի թագավորական ու իշխանական տոհմերից սերվածության հետ: Եվրոպական մտածողության մեջ այս մոտեցումը այնքան էր արմատավորված, որ Ֆրանսիայում, անգամ Ռեստավրացիայի շրջանում ասվում էր, թե մեր Տեր Հիսուս Քրիստոսը ոչ միայն Աստծո Որդին է, այլև սերվել է հին և գեղեցիկ ընտանիքից՝ նկատի ունենալով այն, որ Մարիամը սերում է հին թագավորական տոհմից: Տե՛ս **Ле Гофф Ж.** Цивилизация средневекового запада, Екатеринбург, 2005, էջ 398:

նատոհմի ինքնության պատկերը ներկայացնելիս կարևոր տեղ էր հատկացվում ծագումնաբանության խնդրին: Այսպես. Ստեփանոս Օրբելյանը, ներկայացնելով Սիսական տոհմի նահապետության պատմությունը, հատուկ շեշտում է, թե ինչու է սկսում այդ տոհմի ծննդաբանությունից. «Եվ սա նրա համար, որ չկարծես, թե այս տոհմի մարդիկ խառնիճաղանջ ամբոխներից են կամ ինչ-որ առաջադիմության պատճառով և կամ պատահաբար են ստացել նախաթոռ նահապետությունը, այլ աստվածաստեղծ մարդու նախասկզբնական ազնիվ տոհմից սկսած ակնհայտ հարազատությանը որդիները հայրերին փոխարինելով հասան նախարարության»¹⁹:

Այս ձևով պատմությունը ծառայեցվում է ներկային, իսկ անցյալի արժանահիշատակ դեպքերի ու անցքերի հիշողությունը՝ բարձրացնում ներկա իշխանության հեղինակությունը: Ներկայացնելով Լևոն Գ-ի ծագումնաբանությունը՝ Բաբունին դրանով հաստատում է նրա տոհմի ընտրյալությունը և թագավորության օրինականությունը: Լևոն Գ-ի թագադրման պահը հարմար առիթ էր, որպեսզի Բաբունին արտահայտի թագավորության և թագավորի կարգավիճակի վերաբերյալ իր մտածումները, լուսաբանի «զկարգ և զկենցաղաւարութիւն, և գործ, և զիրաւունս թագաւորի», ներկայացնի կատարյալ թագավորի մասին իր տեսլականը, քրիստոնեական արժեհամակարգի տեսանկյունից ուրվագծի թագավորի և իշխանների գործունեության չափանիշներն ու ուղենիշերը և այլ հարցեր: Ուստի Բաբունին նախ սահմանում է, թե ինչ է թագավորությունը, որոնք են թագավորի խնդիրներն ու գործառույթները, այնուհետև շարադրում թագավորին ներկայացվող պահանջները և տարբեր հարցերի վերաբերյալ իր բարոյախրատական բնույթի մտքերը: Ըստ նրա՝ «Թագաւորութիւն է ըստ ուղիղ բանին՝ ի վերայ աշխարհի՝ որ իւր է վիճակեալ, և ի նմա բնակելոցն իշխել արդարացի հարկս և իրաւունս ի նոցանէ առնուլ, և գնոսին ի հաստատութիւն պահել, արտաքին թշնամեացն՝ քաջութեամբ պատերազմեալ՝ յաղթել, և կամ հաշտութեան հնարիւք զխաղաղութիւն ողջունել և զամենայն ինքեան հնազանդեալսն առանց իրիք պատճառի յաւրէնս և յիրաւունս անլուծանելի ունել...»²⁰: Թագավորության այս բավականին տարողունակ սահմանումը, որում զգացվում է իր ժամանակի առաջնահերթությունների (երկրի կայունություն, բնակչության անվտանգություն, օրենք և իրավունք, արդարություն, պատերազմ, խաղաղություն, հաշտություն) կարևորումը, նախանշում է ինչպես թագավորի, այնպես էլ հասարակական խավերի (ազնվականներ, զինվորականներ, հոգևորականներ և այլն) իրավունքների ու պարտականությունների շրջանակները:

Բաբունին տարբերակում է երկու կարգի թագավորություն՝ երկնային, աստվածային ու երկրային, մարդկային: Աստված բացարձակ ու գերագույն թագավոր է, որը ստեղծելով բոլոր գոյերը՝ իմաստուն կերպով կառավարում-նախախնամում է ներքևներում ու վերևներում գտնվողներին՝ պահելով դրանց ներդաշնության ու միասնության, խաղաղության ու կայունության մեջ: Նրա խնամքի տակ է գտնվում նաև մարդկային թագավորու-

19 Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթագր. Ա.Ա. Աբրահամյանի, Եր., 1986, էջ 69-70:

20 Նույն տեղում:

թյունը: Երկրային թագավորը կոչված է կատարելու երկնային Թագավորի կամքը («ոչ երևիլ ի փառաւքն բարձրամտիլ, այլ սպասաւոր Աստուծոյ թագաւորութեանն զինքն կարծել»²¹), պահպանելու պետական-հասարակական կարգը, հետևելու օրենքների կատարմանը, երկրում հաստատելու խաղաղություն, հանդուրժողական ու բարեկամական հարաբերություններ տարբեր դասերի, ազգերի, կրոնների ու դավանանքների միջև, խրախուսելու և պատվելու բարեգործներին, պատժելու և տանջելու հանցագործներին: Ըստ Բաբունու՝ երկրային թագավորությունը ի սկզբանե գոյություն չի ունեցել, այլ սկզբնավորվել է մարդկության պատմության որոշակի ժամանակահատվածում՝ սկսյալ նախնական մեղսագործությունից: Պատվիրազանցության պատճառով վտարվելով դրախտից՝ մարդիկ շարունակում էին չլսելու աստվածային պատվիրանները, իրար նկատմամբ դավեր էին նյութում, իրար սպանում, բռնություններ գործադրում և այլն, մի խոսքով՝ «բոլորը պատերազմում էին բոլոր դեմ»: Այդ շրջանում մարդկանց ղեկավարում էին նահապետները, որոնցից ոմանք «յաղագս կուրութեան՝ որ էր ի նոսա, իշխեցին զինքեանս թագաւորս կոչել. յաղագս բառնալոյն ի վերայ համազգեանցն, որպէս հսկայիցն ունի բան...»²²: Հենց այդ ինքնակոչ «թագավորների» կարգադրությամբ սկսվեց «բարձրաբերձ բուրգի»՝ Բաբելոնի աշտարակի կառուցումը, սակայն Աստված քանդեց խառնակության ու մարդու մեծամտության ու «ամբարտաւանութեան ամբարտակը», և դրանից հետո Տիտանյան Բելը, բռնանալով ուրիշ ազգերի վրա, Բաբելոնում հիմնեց առաջին թագավորությունը:

Այսպիսով, ըստ Բաբունու՝ թագավորությունը ոչ թե մարդկանց միջև պայմանավորվածության, դաշինքի կամ հասարակական պահանջմունքի, այլ պատվիրազանցության, մեղսագործության և բռնության արդյունք է: Բելից հետո Ասորեստանում իրար հաջորդեցին բազում թագավորներ, տարածաշրջանում առաջացան նոր թագավորություններ՝ մարական, պարսկական, հրեական, հայկական և այլն: Բաբունին, հետևելով Խորենացուն, հայոց պետականության պատմությունը սկսում է Բելի դեմ Հայկի ընդվզումից: Ճակատամարտում սպանելով Բելին՝ հայոց նահապետ Հայկը հյուսիսարևելյան կողմում հիմնում է իր պետությունը, որի ժառանգորդները դարձան Երվանդունիները և Արտաշեսյանները: Այնուհետև նա ուսումնասիրատական նպատակով շարադրում է «աստուածածանաւթը» ազգի՝ Իսրայելի թագավորների պատմությունը՝ շեշտելով այն միտքը, որ նրանցից ճշմարիտ թագավորներ էին նրանք, ովքեր հպատակվում, անսում և կատարում էին երկնային Թագավորի կամքը: Աստծո և մարդկանց կողմից կարգված թագավորները իրարից տարբերվում են իրենց մտածումներով ու գործերով: Բաբունին հանգամանորեն անդրադառնում է Հին Կտակարանում նկարագրված դեպքերին՝ ցույց տալու համար Աստծո կամքը կատարող և չկատարող թագավորների ճակատագրերի տարբերությունները, աստվածապաշտ թագավորների առավելությունները աստվածամարտ թագավորների նկատմամբ: Ինքնակոչ թագավորները՝ բռնությամբ իշխանության հասնելով և շարունակելով չարագործություններ կատարել ու անտեսելով երկնային

21 Նույն տեղում:

22 Վահրամ Բաբունի, Ի մեծի աւոր յայտնութեան Քրիստոսի..., 1869, Բ, էջ 38:

թագավորության գոյությունը, կարծում են, թե իրենց իշխանությունը միայն իրենց բազկի զորության ու հնարամտության արդյունքն է: Սա պատրանք է և մարդկային կարողությունների գերազնահատում: Բաբունին համոզված է, որ Աստված այս կամ այն ձևով միջամտում է մարդկանց գործերին, որ առանց Նրա գիտության ու կամքի ոչինչ տեղի չի ունենում արարված աշխարհում: Աստծո կամքը կատարող թագավորներն են հասնում հաջողությունների: Օրինակ՝ այդպիսին էր հայոց Հեթում թագավորը, որն իր բարի, աստվածահաճո գործերով շարժեց աստվածային կամքը, և Աստված «հաշտ ակամբ ի մեզ հայեալ, // Քանզի զդրունս երկնից բացեալ, // Եւ զբարութիւն յերկիր հեղեալ, // Որ և լինէր՝ պտղաբերեալ»²³:

Սակայն մարդկային կյանքը ենթարկելով աստվածային նախախնամությանը՝ միջնադարյան մտածողները կանգնում էին «աստվածարդարացման», մարդկանց գործերի շարժառիթների ու պատմության իմաստին վերաբերող մի շարք հարցերի առջև. եթե Աստված նախախնամում է մարդկանց, հետևում մարդկային գործերին, ապա նախ՝ ինչպե՞ս անտեսանելի նախախնամությունը համատեղել մարդկանց անձնիշխանության, կամքի ազատության հետ, երկրորդ՝ ինչո՞ւ է Աստված հանդուրժում բռնակալ ու չարագործ թագավորների, առհասարակ՝ չարիքների գոյությունը, երրորդ, ինչո՞ւ են իրենց մեղքերի համար պատժվում հենց քրիստոնյաները (հատկապես հայերը), երբ մեղքեր են գործում բոլորը: Բնականաբար, աստվածաբան Բաբունին հակասություն չպետք է տեսներ աստվածային նախախնամության և մարդու անձնիշխանության միջև: Քննադատելով մարդու վարքի բացատրման ճակատագրապաշտական ու կոշտ դետերմինիստական տեսակետները, Բաբունին անվերապահորեն ընդունում է մարդու անձնիշխանության վերաբերյալ քրիստոնեական հիմնադրույթը: Աստված մարդուն պատվել է անձնիշխանությամբ, առանց որի անհնար է պատկերացնել փրկությունը: Մարդը ազատ է, բայց առանց Աստծո օգնության չի կարող փրկվել, Աստված էլ առանց մարդու ցանկության ու կամային ձիգերի չի փրկի նրան: Այս կապակցությամբ Բաբունին մեջբերում է Օգոստինոս Երանելու (բնագրում՝ «Ակուստին») այն միտքը, թե Աստված «ստեղծեաց զքեզ առանց քեզ, ոչ արդարացուցանէ քեզ առանց քեզ, զոր օրինակ որպէս ոմն ոչ կարէ լուսաւորեալ գտուն, սակայն կարէ բանալ զպատուհան լուսոյն, ընդ որ արեգակն մտանէ և լուսաւորէ գտուն: Քանզի շնորհք ոչ պարգևի այնմ, որ զինքն ո՛չ պատշաճաւոր է առ շնորհս»²⁴:

Մարդը ազատ է ընտրություն կատարելու բարու և չարի միջև, սակայն այդ ընտրության հետևանքների համար մարդ պետք է պատասխան տա: Եթե այդ ընտրությունը հակասում կամ դեմ է Աստծո կամքին, ապա Աստված, միջոցների մեջ խտրություն չդնելով, պատժում է մարդուն: Պատժի միջոցներից մեկն էլ չարագործ թագավորի գոյությունն է, ով իր զահուրելի գործերով խրատի դաս է տալիս մեղքերի մեջ թաղված մարդկանց կամ ում ձեռքով կործանվում են աստվածամարտ թագավորները: Այս տեսանկյունից է Բաբունին բացատրում մահամեղականների կողմից քրիստոնյա-

23 Վահրամայ Բաբունոյ Ոսանաւոր Պատմութիւն Ռուբենեանց, էջ 220:

24 Վահրամայ վարդապետի ասացեալ եթէ յորժամ դիպեցի գալ թշնամեաց ի վերայ քրիստոնէից, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 771, էջ 250 բ-251 ա:

ների, ի մասնավորի հայերի նկատմամբ դրսևորած դաժան վերաբերմունքը, նրանց սրբատեղիների, եկեղեցիների ավերումն ու կողոպուտը: Դրանց հետևանքով հայերը «Ըզհայրենին աշխարհ լքեալ, // Եւ ի յօտարրս պանդխտեալ»²⁵:

Միջնադարում տարածված էր մեղքի տեսությունը, ըստ որի՝ մեր մեղքերի համար է Աստված մեզ պատժում: Օրինակ, ըստ Հովհաննես Երզնկացու՝ Աստված զրկեց հայերին թագավորությունից հետևյալ մեղքերի պատճառով. «Հայոց ետ մեծ իշխանութիւն և զաւրաւոր թագաւորութիւն և, յորժամ ոչ կացին յաւրէնս հրամանացն Աստուծոյ և ոչ լսեցին սուրբ և իմաստուն առաջնորդացն և եղեն անիրաւք և նեղիչք երկրի, էհան Աստուած յիշխանութենէն և զրկեաց ի բարի առաջնորդացն, և մատնեցաք մեք աւար ազգաց սպանողաց, գերողաց և դառն զրկողաց»²⁶: Բայց միթե միայն հայերն են մեղք գործել, հարցնում է Բաբունին և պատասխանում՝ նախ, Աստված ոչ միայն պատժում է մեղսագործներին ու չապաշխարողներին, այլև խրատում, իսկ խրատում է նրանց, ում սիրում է: Երկրորդ, խրատում է ոչ միայն անհավատներին ու թերհավատներին, այլև բարեպաշտներին, ովքեր «միայն ի հաւատն վստահանան և ոչ ստանան զգործս բարիս»²⁷: Բաբունին պաշտպանում է պետության կառուցվածքի օրգանիստական տեսությունը, ըստ որի՝ պետությունը մի կենդանի օրգանիզմ է, որի ամեն մի անդամ կատարում է որոշակի գործառույթ՝ ապահովելով ամբողջի ներդաշնակ գործունեությունը: Ինչպես օրգանիզմի «ղեկավարն ու առաջնորդը» գլուխն է, այնպես էլ պետության գլուխը թագավորն է, որի կառավարման հմտությունից ու վարքագծից է կախված պետության արդյունավետ գործառույթությունը: Սակայն «Ճառ»-ում նա անդրադառնում է ոչ թե այդ օրգանիզմի բոլոր անդամների, այլ հիմնականում՝ իշխող վերնախավի, այսինքն՝ թագավորի, իշխանների և հոգևորականների գործառույթներին, իրավունքներին ու պարտականություններին: Թագավորության գլխավոր գործող դեմքը թագավորն է, որի գործունեությունից, վարվելակերպից, վարք ու բարքից, կառավարման հմտությունից շատ բան է կախված, քանի որ նա միանձնյա ղեկավարելով՝ գտնվում է համայնի ուշադրության կենտրոնում: Դա ինքնին արդեն պարտավորեցնող հանգամանք է: Այդ պատճառով ըստ Բաբունու՝ ուրիշներից առավել թագավորներին պետք է կրթել, դաստիարակել, խրատել ու սովորեցնել կենցաղավարության կանոնները, կառավարման գիտության ու արվեստի սկզբունքները, քանի որ «բարութիւն նոցա բազմաց և չարութիւն յոլովից հասանէ: Վասն որոյ պարտ և արժան է պսակաւորիլ թագաւորի, բարեպաշտութեամբ, խոնարհութեամբ, հեզութեամբ, իմաստութեամբ, առատութեամբ, արդարութեամբ, ճշմարտութեամբ»²⁸: Այդպիսին է նա ներկայացնում Լևոն Գ-ին՝ «Էր հեզութեամբ առաւելեալ, // Երկայնամիտ և ժուժ-

25 Վահրամայ Բաբունույ Ռտանաւոր Պատմութիւն Ռուբենեանց, էջ 190:

26 Հովհաննես Երզնկացի, Թուղթ առ իշխանս Եկեղեց գաւառի, **Քաղղասարյան է.Մ.**, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, էջ 205-206:

27 Վահրամայ վարդապետի ասացեալ եթէ յորժամ դիպեցի գալ թշնամեաց ի վերայ քրիստոնէից, ձեռ. թիվ 771, էջ 245ա-246բ: Տե՛ս նաև՝ Վահրամայ Բաբունույ Ռտանաւոր Պատմութիւն Ռուբենեանց, էջ 238-239:

28 Վահրամ Բաբունի, Ի մեծի աւուր յայտնութեան Քրիստոսի..., 1869, Գ, էջ 52:

կալեալ, // Քաղցրատեսիլ և զուարճացեալ, // Պարկեշտութեամբ փառազարդեալ: // Էր ողորմած որ կարօտեալ, // Եւ ունկնդիր որ բողոքեալ, // Որովք էին զուարճացեալ, // Տունս Հայոց և նորոգեալ»²⁹: Բաբունու կարծիքով՝ թագավորին բնորոշ բարոյական առաքինություններից հիմնայինը պետք է լինի բարեպաշտությունը՝ հավատն առ Աստված, աստվածապաշտությունը, որը ամեն դեպքում առավել գերադասելի է, քան «զականս պատուականս և շքեղագոյնս, քան տերութիւնս բազում աշխարհաց»³⁰:

Ճշմարտագոյն հավատով, ի սրտե ու ի գորութենէ նա պետք է սիրի Աստծուն, փառավորվի Նրանով, հուսա Նրա աջակցությունն ունենալ, կատարի Նրա կամքը, որովհետև միայն հավատքով, ընդամին, գործերով հաստատված հավատքով, կարելի է հաղթահարել դժվարությունները և հաղթել թշնամիներին: Ուստի թագավորը պետք է հոգ տանի հավատքի ամրապնդման համար, հեռու մնա կուռքերից, աստղագուշակների, ճակատագրապաշտների, բախտագուշակների սին խորհուրդներից և հասարակության մեջ տարածված այլևայլ «ախտերից», կարծրատիպերից ու նախապաշարունակներից: Թագավորի կատարելատիպ, «հայր և արինակ թագաւորաց՝ բարեպաշտութեամբ ու ամենայն բարեգործութեամբ» է՝ հրեաների թագավոր Դավիթը, ով թեպետ չարչարվեց «թշնամեաց՝ յիւրոց և յարտաքոյից, սակայն ուղիղ հաւատովն որ յԱստուած՝ յաղթեաց ամենեցուն»³¹:

Բաբունու կարծիքով՝ աստվածապաշտ է նաև թագադրվող Լևոն Գ թագավորը, ինչն էլ է և կլինի նրա թագավորության հաստատունության ու բարգավաճման երաշխիքներից մեկը: Պետության կառավարման շրջանակներում թագավորի կարևորագույն գործառույթներից մեկը անաչառ ու արդար դատավարության ապահովումն է: Թագավորը օրենքների իրագործման և իրավունքների պաշտպանության երաշխավորն է: Միջնադարյան մտածողության հանգույն Բաբունին հստակորեն իրարից չի սահմանազատում կառավարման իրավական ու բարոյական կողմերը: Նրա կարծիքով՝ թագավորը, իբրև դատական իշխանության գլուխ, այս հարցում պետք է ցուցաբերի մարդկային բնության իմացություն, համբերություն, հանդուրժողականություն ու շրջահայացություն, լինի նրբանկատ, հաշվի առնի քննվող գործի բոլոր մանրամասները: Գաղտնիք չէ, գրում է նա, որ մարդիկ իրենց շահի համար «ոչ խնայեն ի միմեանս», որ իրենց նպատակին հասնելու համար պատրաստ են չարախոսելու, բամբասելու, խաբելու, սուտ վկայություններ տալու, դիմացինի իրավունքները ոտնահարելու, իսկ իրենց հզորագույն համարողները անգամ «ի վերայ Աստուծոյ յանդգնէին» և այլն: Թագավորը, ծանոթ լինելով մարդու բնության ուժեղ և թույլ կողմերին, պետք է անցկացնի համակողմանի քննություն, լսի հակառակորդ կողմերին, ստուգի վկաների տեղեկությունները, ճշմարտությունը բացահայտելուց հետո նոր միայն ընդունի որոշումներ: Այս կապակցությամբ տեղին է մեջբերել Ն. Մաքիավելու այն միտքը, որ դատական գործեր քննելիս և վճիռներ արձակելու ժամանակ թագավորը չպիտի ոչ շտապի, ոչ էլ լինի դյուրահավատ ու անշրջահայաց. «Նա իրեն պետք է

29 Վահրամայ Բաբունույ Ոտանաւոր Պատմութիւն Ռուբենեանց, էջ 230:
30 Վահրամ Բաբունի, Ի մեծի աւոր յայտնութեան Քրիստոսի..., 1869, Գ, էջ 73:
31 Նույն տեղում, էջ 51:

դրսևորի որպես զուսպ, շրջահայաց և ուղղամիտ իշխող, բայց այնպես, որ ավելորդ դյուրահավատությունը չվերածվի անզգուշության, իսկ ավելորդ կասկածամտությունը չչարացնի հպատակներին»³²: Նման միտք է արտահայտում նաև Րաբունին: Նրա համոզմամբ՝ թագավորը պետք է վճռական ու հետևողական և սկզբունքային ու անհանդուրժողական լինի ամբաստանյալների ու հանցագործների նկատմամբ, սակայն միևնույն ժամանակ որոշ դեպքերում «ըստ տեղոյ և ըստ պատշաճի» ներողամիտ ու գթասիրտ լինի, «ոչ միշտ խեղդել զհնազանդեալսն, այլ և երբեմն ողորմութիւն խառնել յիրաւունսն...»³³: Սա իրավունքի և բարոյականության փոխհարաբերության («իրավունքի բարոյականացման») հարցի լուծմանն առնչվող բավականին ուշագրավ մոտեցում է: Քանի որ թագավորը ֆիզիկապես ի վիճակի չէ քննել բոլոր դատական գործերը, ուստի պետք է նա ընտրի անբասիր ու արդարամիտ դատավորներ, որոնք իրենց գործը կկատարեն օրենքով ու արդարությամբ:

Պետության, իբրև կենդանի օրգանիզմի, գործունեությունը լիարժեք ապահովելու համար անհրաժեշտ է ոչ միայն թագավորի, այլև մյուս անդամների դերակատարությունը. «Եւ արդ չէ բաւական առողջութիւն գլխոյ միայն ի կատարելութիւն կենդանոյ, այլ և ամենայն անդամոցն յարմարութիւն: Այդպէս և ի հաստատութիւն աշխարհի՝ ընդ թագաւորին գեղեցկութեան և լաւագոյնութեան՝ պիտանացու է և իշխանացն բարիք գոյ»³⁴:

Թագավորի նման իշխանները նույնպես պետք է լինեն աստվածապաշտ ու բարեպաշտ, որովհետև հավատն առ երկնային Թագավոր հաստատուն է դարձնում հավատարմությունը երկրային թագավորի հանդեպ: Րաբունին շեշտում է թագավոր-հպատակներ, թագավոր-իշխաններ հարաբերությունների կարգավորման բարոյական կողմը. իշխանները պետք է սիրով կապված լինեն թագավորի հետ, ենթարկվեն նրա հրամաններին, միմյանց նկատմամբ լինեն հարգալից ու հանդուրժողական, չգժտվեն ու ոխ չպահեն, չնախանձեն մեկը մյուսին, իրար չսպանեն, լինեն իրար աջակից և ուրախանան մեկմեկու հաջողություններով: Ինչպես թագավորը, այնպես էլ իշխանները փառքի ու պատվի հասնելու համար պետք է օրինակ վերցնեն աստվածաշնչյան կերպարներից, հատկապես աստվածապաշտ Դավիթ թագավորից: Իմանալով իրեն ծանոթ իշխանների՝ քրիստոնեական բարոյականությունից հեռու, «անմիտ ու վայրագ», ցուփ ու շվայտ վարքն ու բարքը, Րաբունին նրանց խորհուրդ է տալիս «իմաստութիւն պարապել, ոչ գինարբուց և լկտի երգոց, կամ ունայն զբաղմանց, խաղոց և որսոց. զի գիրք զանմիտսն և զանընտել բարսն յորսոցն նշանակեն որպէս զներբովթն, և զԻսմայէլն, և զԵսաւն՝ վայրագ և անմիտ համարելով»³⁵: Իմաստությունը ամրապնդում է հավատքը, զարդարում մարդու հոգին և նրան դարձնում առաքինի, պարտաճանաչ ու բարեխիղճ:

Թագավորի և հպատակների բարոյական կատարելագործման ու դաստիարակության գործառույթը վերապահված է եկեղեցական դասին՝

32 **Մաքիավելի Ն.**, Տիրակալը, Եր., 2010, էջ 117:

33 **Վահրամ Րաբունի**, Ի մեծի աւուր յայտնութեան Քրիստոսի..., 1869, Դ, էջ 77:

34 **Վահրամ Րաբունի**, Ի մեծի աւուր յայտնութեան Քրիստոսի..., 1869, Ե, էջ 97:

35 Նույն տեղում, էջ 99:

հոգևորականներին, որոնք պետության մեջ ունեն ոչ թե արտոնյալ, այլ ծառայողական կարգավիճակ: Ընդամին, նրանք հոգևոր ծառայություն կատարելուն զուգընթաց պետք է «առանց տրտնջալու»՝ արևես ի ժամու և ի տարաժամու յունկն թագաւորի լսեցուցանել, անպատկառ և անկառ ի սահման թագաւորական ուղղութեան զնա յորդորել: Եւ զաշխարհ ի նոցին ի հնազանդութիւն յորդորել, ուսուցանել, ծառայել մարմնաւոր Տեառն որ-պէս Աստուծոյ, և զամենայն հարկ և զիրաւունս առանց տրտնջման յար-քունիս վճարել: Այլ և ինքեանք նոքաւք հանդերձ արասցեն աղաւթս և պաղատանս (վասն) աշխարհի և թագաւորի՝ պարագայց ամաւք մնալ ի խաղաղութեան»³⁶:

Այս հանգամանքը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ Բաբունու համար պետական շահը վեր է անհատական ու դասային շահերից, որ հասարակական բոլոր շերտերը, ուժերն ու կառույցները, այդ թվում հոգևոր իշխանությունը պետք է միանշանակ ենթարկվեն աշխարհիկ իշխանությանը: Միջնադարի համար արտասովոր թվացող այս դիրքորոշումը լիովին համապատասխանում է Բաբունու ինչպես պատմափիլիսոփայական ու պատմագիտական հայացքներին, այնպես էլ քաղաքական գործունեության ընդհանուր ոգուն և տեսլականին:

Սեյրան Ա. Զաքարյան – գիտական հետաքրքրությունների բնագավառները՝ փիլիսոփայության պատմություն, հայ փիլիսոփայության, մշակույթի և ինքնության պատմություն: Հեղինակ է ինը մենագրության, այդ թվում՝ «Հայ իմաստասերներ» (Գրիգոր Տաթևացի), Եր., 1998, «Մարդու հիմնահարցը 13–15-րդ դարերի հայ փիլիսոփայության մեջ», Եր., 1999, «Փիլիսոփայության պատմություն» Եր., 2000, 2-րդ հրատ. 2007, «Հայկական Վերածննդի հարցը» (մեթոդաբանական վերլուծություն), Եր., 2006, «Ունիվերսալիաների հիմնահարցը միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ», Եր., 2014:

Summary

HISTORICAL-PHILOSOPHICAL AND POLITICAL VIEWS OF VAHRAM RABUNI

Seyran A. Zakaryan

Key words – Vahram Rabuni, Historiography of Middle Ages, History of Philosophy, History of Armenia, Church, Historical Memory, Godliness, Legitimacy of State, Inheritance law.

This article demonstrates that the central idea of historical-philosophical and political views of the 13th century outstanding philosopher and political-state actor Vahram Rabuni is the fortification and strengthening of the Armenian statehood of Cilicia. Rabuni “revolutionizes” the structures of historical

³⁶ Նույն տեղում: Ավելորդ չէ նշել, որ «Ճառ»-ում ընդամենը այսքանն է ասված թագավորության մեջ եկեղեցու տեղի և դերի մասին:

memory and national identity and puts both historical investigation and the understanding of events of his time for the increase of legitimacy and social authority of the state and not the church. He stresses the importance of pre-conditions of statehood perseverance (legitimacy, godliness, and wise application of authority), moreover he highlights the creation of a united front of Christian churches, solidarity of all social classes and activities contributing to improvement of statehood. Unlike many Medieval thinkers, Rabuni subordinates spiritual power to worldly power by ascribing ancillary function to the religious class and requiring that the church pay taxes to the state.

Резюме

ИСТОРИОСОФИЧЕСКИЕ И ПОЛИТОЛОГИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ ВАГРАМА РАБУНИ

Сейран А. Закарян

Ключевые слова – Ваграм Рабуни, средневековая историография, философия истории, история Армении, церковь, историческая память, благочестие, легитимность государства, наследственное право.

В статье показывается, что в центре историософических и политологических взглядов видного армянского философа, государственного и политического деятеля XIII в. Ваграма Рабуни была идея укрепления и процветания Киликийского армянского царства. По мнению автора, Рабуни делает “переворот” в структуре исторической памяти и национальной идентичности, так как изучение истории и осмысление реалий своего времени использует для утверждения легитимности и социального авторитета царской власти. Наряду с предпосылками долговечности государства (легитимность, благочестие, мудрое управление) он считает важным сотрудничество христианских церквей, солидарность всех слоев общества и их деятельность в пользу государства. В отличие от многих средневековых мыслителей Рабуни духовную власть безоговорочно подчиняет светской власти – считая духовенство служащим слоем, который должен выплачивать государству налоги.